«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Անձի սոցիալականացման խնդիրը տարրական դպրոցում

ԱՌԱՐԿԱ **Դասավար**

ՀԵՂԻՆԱԿ Էլիտա Պետրոսյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սադունցի հիմնական դպրոց

Անձի սոցիալականացման խնդիրը տարրական դպրոցում

Բովանդակություն

Ներածություն …….3

1. Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց ……...5
2. Դպրոցի սոցիալ մշակութային միջավայրի ձևավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում ……..13

Եզրակացություն …….20

Օգտագործված գրականության ցանկ ……21

Ներածություն

Թեմայի արդիականություն:

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Այն թույլ է տալիս անձին համարվելու տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալու որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին:

Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր: Անձի սոցիալական կայացումը պայմանավորված է լինում թե սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործողության բնույթից, և թե՝ անհատական հատկանիշներից: Նրա արտահայտությունը պայմանավորվում է անձի սոցիալական ձևավորման բնույթով՝ ի նկատի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Այսպիսով, անձի սոցիալական կերպարը հանդես է գալիս որպես տվյալ հասարակությունում արժևորվող հիմնարար բնութագրական և արտահայտվում է տվյալ սոցիալական խմբի հետ անձի նույնականացման աստիճանով:

Դպրոցը հանդիսանում է սոցիալականացման գլխավոր, միաժամանակ ամենախրթին ինստիտուտներից մեկը: Այստեղ առնչվում և ներդաշնակվում են մարդու կյանքի ամենատարբեր կողմերը: Պարզվում է, որ հաջող ուսում ստանալու համար բավական չէ ունենալ բնածին ընդունակություններ:

Շատ մեծ նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընտանիքի նյութական բարեկեցությունը և հոգևոր մթնոլորտը, երեխայի ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, բակի շրջապատը, որտեղ ամեն օր նա մտնում է, և այլն:

Կարևոր է նշել, որ երեխայի սոցիալականացման գործընթացը իրականանում է նրա գործունեության հիմքի վրա:

Այսպես, դպրոցի ներսում մանկավարժների հիմնական խնդիրն է երեխաների մոտ զարգացնել ուսումնադաստիարակչական գործունեությունը: Իսկ դրա համար պետք է երեխայի մեջ հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ, ստեղծել մի շարք պայմաններ, բարենպաստ հոգեբանական կլիմա, ավելի հարմարավետ միջավայր, որտեղ երեխան կարող է իրականացնել իր հետքրքրությունները, առաջ

բերել նախաձեռնություն, մասնակցել մի շարք խնդիրների որոշմանը, սովորել ինքնապաշտպանություն և այլն:

Ինչքան մեծանում է երեխան, այնքան առաջնային են նրա համար ոչ թե ուսումնական գործունեությունը, այլ սոցիալական նշանակությունը, զբաղմունքի ազատ ընտրության հնարավորությունը, համաձայն սեփական ընդունակությունների և ցանկությունների: Բայց դպրոցում մանկավարժներին հիմնականում հետքրքրում է երեխայի առաջադիմությունը և վարքը: Կարելի է եզրակացնել, որ ուսուցումը անհնար է առանց անձի ամբողջական ձևավորման, այլապես դասավանդումը կհանգեցնի որոշակի գիտելիքների կուտակմանը, բայց դրա համար երեխան պետք է ունենա կամքի ուժ, նպատակասլացություն և այլն: Դա ոչ բոլոր երեխաների մոտ է դրսևորվում, քանի որ ընտանիքը միշտ չէ, որ կարող է պատրաստ լինել սատարելու, և դպրոցն էլ ոչ այնքան հաճախ կարող է երեխաների հետաքրքրությունները և ընդունակությունները զարգացնել:

Թեմայի նպատակը և խնդիրները:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել՝ անձի սոցիալականացման խնդիրը տարրական դպրոցում:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց,
- ուսումնասիրել՝ դպրոցի սոցիալ մշակութային միջավայրի ձևավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

1. Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Այն թույլ է տալիս անձին համարվելու տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալու որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին:

Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր: Անձի սոցիալական կայացումը պայմանավորված է լինում թե սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործողության բնույթից, և թե՝ անհատական հատկանիշներից: Նրա արտահայտությունը պայմանավորվում է անձի սոցիալական ձևավորման բնույթով՝ ի նկատի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Այսպիսով, անձի սոցիալական կերպարը հանդես է գալիս որպես տվյալ հասարակությունում արժևորվող հիմնարար բնութագրական և արտահայտվում է տվյալ սոցիալական խմբի հետ անձի նույնականացման աստիճանով:

Սոցիալականացման բովանդակությունն բնորոշվում է հասարակությունում նշանակալից սոցիալական նորմերի և արժեքների տիրապետմամբ:

Չնայած հասարակությունում անձի ներգրավմանը միտված սոցիալականացման ուղղվածությանը, այն նպատակաուղղված է նաև անձի ինքնառեալիզացմանն ու կայացմանը, այլ խոսքերով, անձնային դրական հատկանիշների զարգացմանը:

Ա.Վ. Պետրովսկին առանձնացնում է սոցիալականացման ընթացքում անձի զարգացման երեք փուլ[1].

1. աղապտացումը,
2. անձնավորացումը, և
3. ինտեգրումը:

Առաջին՝ աղապտացիոն փուլը, համընկնում է մանկության հետ, երբ անձը յուրացնում է իրեն շրջապատող մարդկանց սոցիալական փորձը և հանդիսանում է դաստիարակության և կրթության օբյեկտ:

[1] Տե՛ս, Флейвелл Джон Х., Генетическая психология Жана Пиаже, М.: 1967, էջ 11-12:

Երկրորդ փուլում կարևորվում է նախկինում յուրացրած արժեքների և նորմերի անձի վերարտադրության կարողությունը: Դրանք անձը ջանում է վերարտադրել ոչ միայն իրենց սովորական ձևով, այլև՝ փորձում է ներկայացնել յուրովի և տալ երևույթների սեփական մեկնաբանությունները: Անձնավորացման այս փուլը առավել վառ է արտահայտվում կրտսեր տարիքի շրջանում, երբ անձի գործունեությունը դառնում է ինքնաներկայացման և ինքնահաստատման միջոց: Ինտեգրման փուլը հանդես է գալիս հասարակության հետ անձի գոյատևման համաչափությամբ և ներդաշնակությամբ: Որքանով անձը իրեն գիտակցում է հասարակության լիիրավ անդամ, ընդունում և կիսում է հասարակական նորմերն ու արժեքները, այնքանով նա համարվում է սոցիալականացված և հասարակայնորեն կայացած անձնավորություն: Սոցիալականացման արդյունքում ձևավորվում են անձի այնպիսի հատկանիշներ, որոնք վկայում են տվյալ սոցիալական խմբին նրա պատկանելիության մասին:

Անձը իր կյանքի ողջ ընթացքում շարունակում է հանդես գալ սոցիալական հարաբերությունների թե օբյեկտի, և թե՝ սուբյեկտի կարգավիճակում: Այսպիսով, սոցիալիզացիայի օբյեկտ հանդիսացող անձը աստիճանաբար վեր է ածվում հասարակության այլ անդամների նկատմամբ սուբյեկտի և ինքն է ընդգրկվում հասարակական արժեքների փոխանցման գործընթացի մեջ: Այդ գործընթացի ընթացքը պայմանավորվում է մի շարք գործոններով:

Ա.Վ. Մուդրիկը առանձնացնում է սոցիալականացման չորս գործոնների խմբեր[2]: Հեղինակը մեգագործոնների շարքում է դասում համաշխարհային գործընթացները, որոնք այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր մարդկանց սոցիալականացման վրա:

Հաջորդ խումբը ներկայացնում են մակրոգործոնները՝ դրանք են՝

- պետությունը,
- էթնոսը,
- հասարակությունը, որոնք ներգործում են գերազանցապես տվյալ երկրում ապրող անձանց սոցիալականցման վրա:

[2] Տե՛ս, Мудрик А.В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: 2004, էջ 42-44:

Գործոնների մեկ այլ մակարդակ՝ մեզոգործոնները, ներկայանում են տվյալ երկրում անձանց աշխարհագրորեն համատեղ ապրելու կամ միասին հաղորդակցվելու պարագայում: Դրանք են քաղաքը, գյուղը, համայնքը, հեռուստատեսությունը, տեղեկատվական այլ համակարգերը և այլն: Եվ վերջապես, միկրոգործոնները անձի վրա անմիջապես ներգործություն ունեցող գործոններն են, ինչպիսիք են ընտանիքի, հասակակիցների և շրջապատի հետ շփումը, դաստիարակչական և կրթա - կան կազմակերպությունները, ինչպես նաև՝ հասարակական, կրոնական և այլ նմանատիպ կազմակերպությունները:

Ամփոփելով սոցիալականացման տեսական եզրակացությունները, Ա.Վ. Մուդրիկը առանձնացնում է այդ երևույթի սոցիոլոգիական հասկացումը:

Ըստ դրա, սոցիալականացումը հանդես է գալիս երկու՝

1. առաջնային, և
2. երկրորդային սոցիալականացման մակարդակներով:

Առաջինի տակ հասկացվում է փոքր խմբերում միջանձնային հաղորդակցումը, ինչպիսիք են ընտանիքը, հասակակիցների, այլ մտերիմների, ուսուցիչների և այլոց խմբերը:

Երկրորդային սոցիալականացումը տեղի է ունենում սոցիալական մեծ խմբերի և ինստիտուտների մակարդակում:

Դրանք են՝

- ֆորմալ կազմակերպությունները,
- կրթական,
- զինվորական, ու
- պետական այլ հաստատությունները և այլն:

Ամբողջականացնելու համար անձի սոցիալականացման տեսական հայեցակետերը, հարկ է կանգ առնել նաև երևույթի մեխանիզմների վրա:

Ժամանակակից սոցիալ-հոգեբանական և սոցիոլագիական գրականության մեջ առանձնացվում են սոցիալականացման մեխանիզմների երկու խոշոր խմբեր՝

1. սոցիալ-հոգեբանական, և
2. սոցիալ-մանկավարժական մեխանիզմներ:

Առաջին խմբին է պատկանում իմփրիթինգը՝ տպավորումը, որը ենթագիտակցա - կան մակարդակի վրա կենսականորեն կարևորվող օբյեկտների տպավորումն է: Առանձնացվում է նաև որևէ օրինակի կամ օբյեկտի, ընդհանուր առմամբ, սոցիալական փորձի նմանակումը և նույնականացումը: Վերջինս հասկացվում է որպես այլ անձի կամ խմբի հետ տվյալ անձի նույնացումը:

Վերը նշված մեխանիզմների գործառնության ընթացքում և արդյունքում անձը հայտնվում է ռեֆլեքսիայի՝ որպես սոցիալականացման մեկ այլ մեխանիզմի, կացության մեջ:

Նա գնահատում է սոցիալական տարբեր ինստիտուտներին, ընտանիքին և իր սոցիումին բնորոշ արժեքները, ընդունում կամ, հակառակն, մերժում է դրանցից մի քանիսը: Արդյունքում անձը ընտրում է իր համար կարևորություն ներկայացնող արժեքների մի համալիր, համապատասխան որի ներկայանում է հասարակությանը: Դրա շնորհիվ անձը այս կամ այն չափով ընդգրկվում է սոցիալականացման գործընթացների մեջ և ներկայանում տվյալ հասարակության մի մաս:

Ինչպես հայտնի է, գոյություն ունեն ինքնապաշտպանական բազմաթիվ մեխանիզներ, որոնք սովորաբար կիրառում են «նորմալ» մարդիկ:
Ա. Ֆրոյդը առանձնացնում է հետևյալ պաշտպանական մեխանիզմները՝ արտա - մղում, ռեգրեսիա (հոգեբանական նահանջ), ռեակտիվ կազմավորում, մեկուսացում, պրոեկցիա, ինտրոեկցիա, սուբլիմացիա, ռացիոնալիզացիա, իդեալիզացիա և այլն[3]:

Սոցիալականացման սոցիալ-մանկավարժական մեխանիզմներից նշանակալի են ավանդական, ինստիտուցիոնալ և միջանձնային մեխանիզմները: Ավանդական մեխանիզմի գործառնությունը հանդես է գալիս ընտանիքի և անմիջական շրջապատ կողմից ընդունված վարքի նորմերի, սթերեոտիպերի յուրացման արդյունքում: Դա ձևավորում է անձի սովորութային գիտելիքի համակարգը, որին անձը՝ կախված այն բանից, թե ինչքանով է համարում այդ շրջապատը հարազատ և ընդունելի, այդքանով ձգտում է նրան հետևել:

Սոցիալականացման ինստիտուցիոնալ մեխանիզմը գործում է հասարակական ինստիտուտների և տարբեր կազմակերպությունների հետ անձի փոխգործողու -

[3] Տե՛ս, Фрейд З., Психология масс и анализ человеческого Я, М.: 1925, էջ 52-54:

թյան արդյունքում: Այդ ինստիտուտների միջոցով նա կուտակում է սոցիալապես կարևորվող սոցիալական նորմերի ու հասարակության արժեքների մասին գիտելիքը: Սոցիալականացման ևս կարևոր մեխանիզմ են միջանձնային փոխգործողության ձևերը, որոնք առավել ցայտուն են արտահայտվում սոցիալապես և անձնապես նշանակություն ներկայացնող շփումներում:

Ժ. Պիաժեն սկիզբ է դրել մի շարք ուսումնասիրությունների, որոնք անդրադառնում են էթնիկ ինքնության խնդիրների գիտակցմանը երեխաների մոտ[4]: Նա առանձնացրել է երեք տարիքային փուլ, որոնց արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է էթնիկ նույնականացման գիտակցումը.

Վերջին տարիներին մի շարք հեղինակներ անդրադառձել են ոչ միայն էթնիկ ինքնության զարգացման խնդիրներին, այլև առաջ են քաշել էթնիկության դրսևորման նոր միավոր՝ էթնիկ հատկանիշների կայունության կամ կոնստանտի բաղադրիչը:
Կ. Օկամպոն, Մ. Բերնալը և Պ. Նայթը, որոնք շարունակեցին Ժ. Պիաժեի կոգնիտիվ զարգացման տեսությունը, կարծիք են հայտնել, որ դեռահասության շրջանում էթնիկ կոնստանտների ի հայտ գալը հուշում է, թե էթնիկ ինքնության ձևավորման, և թե հիմնական սոցիալ-հոգեբանական բնութագրականների գիտակցման մասին[5]:
Այդ հեղինակների հետազոտությունները, այսպիսով, լուսաբանեցին երեք հիմնական կոնստանտների ժամանակագրական ձևավորման փուլերը՝

1. սեռական կայուն բնութագրականների գիտակցումից /2-2,5 տարեկան հասակում/,
2. մինչև ռասայական /8-9 տարեկան/, և
3. էթնիկ կոնստանտների /12-13 տարեկանից ոչ շուտ/ գիտակցումը:

Տարբեր գիտությունների հայեցակետից սոցիալականացումը կարող է հասկացվել տարբեր կերպ՝ կախված տվյալ գիտության առջև դրված նպատակներից: Օրինակ, Ի.Վ. Կոժանովը ներկայացնում է մի շարք հարակից գիտությունների դիրքորոշումները երևույթի նկատմամբ:

Սոցիոլոգիան այն դիտում է տվյալ միջավայրի դիտակետից՝ այն պայման - ների և գործոնների, որոնք պայմանավորում են սոցիալապես կոմպետենտ անձի

[4] Տե՛ս, Пиаже Ж., Моральное суждение у ребенка, М.: 2006, էջ 62-64:
[5] Տե՛ս, Мертон Р.К., Социальная структура и аномия. Социология преступности, М.: 1966, էջ 61-62:

ձևավորումը: Մարդաբանական հետազոտություններում կարևորվում է մշակույթի ազդեցությունը անձի սոցիալականացման վրա, որի արդյունքն է ադապտացման շնորհիվ անձի կողմից սոցիոմշակութային տարրերի փոխանցումը միջավայրին: Սոցիալական հոգեբանության հայեցակետից սոցիալականացումը ներկայանում է անձի՝ իրեն շրջապատող մարդկանց հետ փոխգործողության գործընթաց է, որի շնորհիվ անձը սոցիալապես զարգանում և ձեռք է բերում նոր գիտելիքներ: Ուստի, սոցիալականացման սահմանումները նույնպես կարող են տարբերվել՝ բնորոշե - լով տվյալ գիտության խնդիրներն ու նպատակները: Այդ իսկ պատճառով բերենք երևույթի համեմատաբար ընդհանուր, հանրագիտարանային որոշ ձևակերպումներ: Սոցիալականացումը գործընթաց է, որի շնորհիվ անձը յուրացնում է գիտելիքների, նորմերի և արժեքների որոշակի համակարգը, ինչը թույլ է տալիս իրեն հանդես գալ հասարակության լիիրավ անդամ:

Մեկ այլ ձևակերպման համաձայն, սոցիալականացումն այն հասարակության պատմա-մշակութային փորձի յուրացման և վերարտադրության գործընթաց է, որին տվյալ անձը պատկանում է: Կարելի է շարունակել սոցիալականաց - ման զանազան ձևակերպումների շարադրանքը, սակայն բոլոր սահմանումներում կտեսնենք հասարակության հետ փոխգործողության և այդ հասարակությունում ներկայացման անձի բնութագիրը:

Սոցիալականացման ընդհանուր գործընթացների մեջ անհրաժեշտ է նշել էթնոմշակութային սոցիալականացման կարևորությունը, որը տեղի է ունենում էթնիկ խմբի հետ անձի փոխգործողության ընթացքում:

Հեղինակը, ամփոփելով երևույթի սահմանման և ուսումնասիրման տարբեր գիտությունների ձեռքբերումները, հստակ տարանջատում է էթնիկ, մշակութային և էթնոմշակությին սոցիալականացման եզրույթները: Առաջինի տակ նա հասկանում է անձի ներգրավումը սեփական էթնիկ խմբի մշակույթին, երբ տեղի է ունենում ինկուլտուրացիայի գործընթացը, այսինքն, տվյալ էթնոսի մշակոյթի յուրացումը:
Էթնիկ սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է ազգային ավանդույթները, վարքագիծն ու աշխարհայացքը: Արդյունքում տեղի է ունենում տվյալ էթնոսի հետ անձի նույնացումն ու այլ էթնոսներից նրա տարբերակումը:

Մշակութային սոցիալականացումը Կոժանովը բնորոշում է որպես անձի հետ հասարակության մշակութային արժեքների փոխանցման գործընթաց, ինչի արդյունքում անձը ունակ է լինում պատշաճ ներակայանալու մշակութային տվյալ միջավայրում: Իսկ էթնոմշակութային սոցիալականացումն իր մեջ է ներառում վերը նշված երկու բնորոշումների հատկանշական կողմերը: Այն փոխկապակցված է անձի էթնիկության դրսևորումների հետ և պահանջում է խորը ուսումնասիրություն:

Երևույթի այս հայեցակետը անհրաժեշտ է քննել որոշակի էթնոմշակու - թային միջավայրի սահմաններում՝ բացահայտելու համար այդ միջավայրում անձի սոցիալապես կայացման և գործունեության մանրամասները: Այն անհրաժեշտաբար փոխկապակցված է լինում անձի կրթական ձեռքբերումների հետ, որոնք ներ են առնում ազգային արժեքների և սովորույթների ողջ համալիրը:

Անձի դաստիարակության գործում ազգայինի կարևորության մասին արտահայտվել է դեռ Կ.Դ. Ուշինսկին[6], որը շեշտել է անձի ազգային ինքնատիպության միջոցով համաշխարհային հանրությանը ներկայացման փաստը և ազգայինի խորը արմատների իրողությունը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրությունը հրավիրել էթնոմշակու - թային սոցիալականացման կարևոր մի սկզբունքի վրա, այն է, որ էթնիկա - կան սոցիալականացումը, այսինքն սեփական էթնիկ խմբի ազգային մշակույթի և արժեքների յուրացումը, անվերապահորեն ուղեկցվում է համաշխարհային մշակութային արժեքների յուրացման հետ և ընդգրկվում է համաշխարհային մշակութային սոցիալականացման գործընթացի մեջ:

Մ.Ի. Բաիշևան և Ռ.Ա. Գոլիկովան կարծիք են ներկայացրել, որ սոցիալականացման ազգային և համաշխարհային միավորները ոչ թե հաջորդում են միմյանց, այլ՝ առաջինը ներ է առնվում երկրորդի մեջ՝ որպես մասը ամբողջի: Ելնելով վերը ներկայացված տեսական վերլուծություններից, կարելի է փաստել էթնոմշակութային սոցիալականացման բարդ, երկարատև մի գործընթաց լինելու մասին, որն արտահայտվելով յուրային էթնիկ խմբում անձի ընդգրկվելու միջոցով, անշուշտ, ներ է առնվում համամարդկային արժեքների յուրացման գործընթացի

[6] Տե'ս, Ушинский К.Д., О народности в общественном воспитании, Педагогические сочинения: в 6 т., т. 1, М.: 1990, էջ 91-92:

մեջ: Այդ պրոցեսը կարող է նշանավորվել ներէթնիկ և միջէթնիկ սոցիալականաց - ման համալիրի տեսքով: Այս առումով առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անձի սոցիալականացման ընթացքում ձևավորվող էթնիկության կայուն հատկանիշները:

Նրանց պահպանման գործում մեծ դեր են խաղում սոցիալականացման ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք ուղորդում և պետականորեն կարգավորում են այդպիսի կայուն հատկանիշների յուրացումը հասարակության կողմից:

Էթնոմետ սոցիալականացման ընթացքում՝ մասնավորապես կրթական ոլորտում իրականացվող, անձը ոչ միայն յուրացնում է սոցիալական փորձի համաշխարհային տարրերը, այլև արժևորում է սեփական էթնիկ խմբին իր պատկանելությունը:

Այդ գործընթացում արտացոլվում են նաև միջանձնային փոխգործողություն - ների և ավանդապես սերնդե սերունդ փոխանցվող սոցիալական փորձի շնորհիվ կուտակված գիտելիքները:

Այսպիսով, էթնիկապես պայմանավորված սոցիալական արժեքներն ու նորմերը, որոնք սոցիալականացման համապատասխան մեխանիզմների շնորհիվ փոխանցվում են անձին, աստիճանաբար դառնում են անձի սոցիալ-հոգեբանական բնութագրականների մի մասը: Եվ այդ գործընթացում կարևոր դեր է խաղում անձի կոնֆեսիոնալ ինքնության գործառույթը, որն էթնոմետ սոցիալականազացման վճռորոշ գործոններից է:

Անձի էթնոմետ սոցիալականացման կոնստրուկտիվ դրսևորումների ձևավորումը նրա կառուցվածքային և գործառութային տարրերի ամբողջականության արդյունք է: Այսինքն, սոցիալականացման մեխանիզմներից որևէ մեկը առանձին վերցրած չի կարող պայմանավորել անձի էթնիկության ամբողջական արժեհամակարգը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ անձի էթնիկ ինքնության էթնոմետ սոցիալականացման գործում առավելապես կարևորվում է սոցիալականաց - ման կրթական ինստիտուտը, որի նպատակաուղղված գործունեությունը խթանում է էթնոմետ արժեհամակարգի ձևավորումը:

2. Դպրոցի սոցիալ մշակութային միջավայրի ձևավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում

Սոցիալականացումը երկար և բարդ գործընթաց է, որը տեղի է ունե - նում տարբեր, բայց փոխկապվածության և փոխհամաձայնության մեջ գտնվող սոցիալական ինստիտուտների միջոցով:

Այդ սոցիալական ինստիտուտները հանդիսանում են մարդու հասարակական կյանքի կազմակերպման և կարգավորման միջոցներ, որոնց օգնությամբ երեխան ծա - նոթանում է հասարակական նորմերին ու վարքագծային կանոններին և յուրացնում դրանք:

Գերմանացի գիտնական Դյուրկհեյմն ասում էր. «Սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է», որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր[7]:

Տարբեր սոցիալական ինստիտուտների ազդեցությունը երեխայի սոցիալականացման գործընթացում տարբեր է: Դրանցից մի քանիսն ունեն տարերային ներգործություն երեխայի վրա. նրա զարգացման և հասարակական էակ դառնալու գործընթացում, մյուսներն ունենում են ավելի էական ազդեցություն անձի ձևավորման վրա:

Հիմնական սոցիալական ինստիտուտներ են համարվում՝ ընտանիքը, դպրոցը, մշակույթը և կրոնը:

Բացի վերոհիշյալ ինստիտուտները՝ սոցիալականացման գործընթացի վրա ազդում են նաև. ժառանգականությունը, ֆիզիկական միջավայրը, անհատական և խմբային փորձը: Նշյալ սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, քանի որ այստեղ է ծնվում երեխան, և այստեղ է սկսվում անձի ձևավորումը, զարգացումն ու դաստիարակությունը, այստեղ է երեխան յուրացնում սոցիալական դերերը, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար:

Ընտանիքում երեխան առաջին անգամ հաղորդակցվում է մշակութային արժեք - ներին, յուրացնում հասարակական, վարքագծային նորմեր, կանոններ, այստեղ է իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին:

---

[7] Տե'ս, Ա.Հ. Սարգսյան., Մշակույթի տեսություն, Ե.: 2003, էջ 29:

Դպրոցում՝ կրթական միջավայրում նույնպես երեխան շփվում և հա - ղորդակցվում է այն արժեքների հետ[8], որոնք կրում է այդ հասարակությունը: Կրթական գործընթացում ձեռք բերելով գիտելիքներ՝ երեխան ոչ միայն զարգանում է, այլ նաև հարմարվում այն հասարակությանն ու սովորույթներին, որտեղ ապրում է: Մշակույթն այն սոցիալական ինստիտուտն է, որն ընդգրկում է մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքները:

Երբ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, հասկանալի է, որ ծնողը ավելի շատ մասնակցության անհրաժեշտություն և հնարավորություն պիտի ունենա երեխայի կրթական գործընթացում:

Ծնողի մասնակցությունը երեխայի կրթական գործընթացում սկսվում է ընտանիքից և շարունակվում համայնքում ու դպրոցում: Շատ հաճախ երեխաների կրթությունը տուժում է այն պատճառով, որ ընտանիքում ակնկալիքները երեխայից կրթության, ձեռքբերումների ու արդյունքների առումով շատ ցածր են կամ իսպառ բացակայում են: Սա հաճախ կրկնվող երևույթ է: Յուրաքանչյուր ծնող, անկախ իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի աստիճանից, պետք է հավատա կրթության դրական ազդեցությանը երեխայի զարգացման գործընթացում և չբացառի նրա առաջխաղացումն ու հնարավոր ձեռքբերումները:

Երբ երեխան արդեն դպրոցում է, ծնողը պետք է փորձի համագործակցության ուղիներ գտնել և (եթե դրանք չկան դպրոցի կողմից, ապա ինքը պետք է այդ ուղի - ները գտնի), հնարավորինս համագործակցել ուսուցիչների հետ, որովհետև ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները մեր հասարակության այն անդամներն են, ովքեր հաճախ առաջնորդվում են դեռևս գոյություն ունեցող կարծրատիպերով, որ ԿԱՊԿՈՒ երեխաները չեն կարող առաջընթաց և ձեռքբերումներ ունենալ, մինչդեռ այդ համագործակցությունը իսկապես ծնողին դարձնում է ավելի իրատես իր երեխայի կարողությունների հանդեպ, ուսուցչին դարձնում է ավելի վստահ, որ ինքը կարող է ԿԱՊԿՈՒ երեխայի կրթությունը կազմակերպել: Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների

[8] Տե'ս, Галагузова М.А. и др., Социальная педагогика, М.: 2000, էջ 54-55:

ընդհանուր հետաքրքրություններն են, իսկ այս պարագայում ներառական կրթությունը կօգնի բոլորին՝ ստանալ բազմաթիվ հարցերի պատասխաններ և գտնել դժվարությունների հաղթահարման ուղիներ: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են:

Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել, ինչը կարող է նպաստել կրթության որակի բարձրացմանը:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն:

Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործու - թյունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգաման - քով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, պատկերացնո՞ւմ են արդյոք իրենց դաստիարակության գործընթացում և ինչպես: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Արդի ժամանակաշրջանում գնալով մեծանում է սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը դպրոցականների սոցիալական դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների, աշխարհայացքի ձևավորման վրա:

Դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրը այն կարևորագույն գործոններից մեկն է, որը անմիջականորեն ներգործում է սովորողների դաստիարակության, սոցիալականացման և կրթության որակի վրա:

Առարկելի է, այն տեսակետը, որ անձի զարգացման վրա ազդում են երեք հիմնական գործոն՝

1. դաստիարակությունը,
2. սոցիալական միջավայրը, և
3. ժառանգականությունը:

Ելնելով անձի զարգացման վրա ազդող գործոնների վերաբերյալ հայեցակարգային դրույթներից և ժամանակակից մանկավարժական մոտեցումներից, մասնավորապես սոցիալ-մշակութային մոտեցումից, ինչպես նաև բարոյագիտական, հոգեբանական, մանկավարժական, մարդաբանական տեսակետներից՝ մենք գտնում ենք, որ այսօր դպրոցի սոցիալ-մշակութային զարգացած միջավայրը կարող է լուծել դպրոցականների արժեքային ինքնորոշման և արդյունավետ սոցիալականացման խնդիրը, քանի որ, ինչպես նշում է ռուս գիտնական Մ.Ա. Կարակովսկին. «նոր դպրոցական փիլիսոփայության հռչակած արժեքները չեն համընկնում իրականում գոյություն ունեցող դպրոցական մշակութային արժեքների հետ»[9]:

Անձի սոցիալականացման խնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական տեսությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդը սոցիալ-մշակութային միջավայրի արդյունք է և ձևավորվում է այդ միջավայրում՝ հասարակական կապերի մեջ իրականացնելով իր սոցիալական կեցությունը: Սոցիալ-մշակութային միջավայրում է ընթանում մարդու սոցիալական հասունությունը, կարգավորվում՝ դրդպատճառային ոլորտը: Այդ են վկայում գիտնականներ՝ Ա. Ադլերի, Ջ. Դյուիի, Է. Ֆրոմմի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Լ.Ս. Վիգոտսկու, Պ. Բուրդիյեի, Ա.Ս. Ռեանի և այլոց հետազոտությունները:

---

[9] Տե՛ս, Караковский В.А., Воспитательная система школы: Педагогические идеи и опыт формирования. М.: 1991, էջ 12-15:

Ընդ որում, ֆրանսիացի խոշորագույն սոցիոլոգ Պիեռ Բուրդիյեն նշում է, որ երեխայի սոցիալականացման գործընթացը տեղի է ունենում ուրիշի օգնությամբ և այդ օգնականները մարդիկ են, հաստատությունները:

Պ. Բուրդիյեն դրանց անվանում է սոցիալականացման գործակալներ, որոնք պատասխանատու են մշակութային նորմերի ուսուցման և սոցիալական դերերի ձուլման համար:

Պ. Բուրդիյեն առանձնացնում է առաջնային և երկրորդական սոցիալականացման գործակալներ[10]:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից՝ համայնքում առկա սոցիալ-մշակու - թային ինստիտուտները, եկեղեցին, պատմամշակութային հուշարձանները համարվում են դպրոցականների սոցիալականացման երկրորդային գործակալներ, որոնց ազդեցությունը, մեր կարծիքով, մեծանում է հատկապես երեխայի վաղ պատանեկության փուլից սկսած: Դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի կառուցվածքային բաղադրիչները ձևավորվում են արտաքին սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության շրջանակներում: Այդ տեսանկյունից դպրոցի սոցիալ - մշակութային միջավայրը մենք համարում ենք համայնքի սոցիալ-մշակութային միջավայր ենթահամակարգ: Դպրոցի կրթական գործընթացի բոլոր սուբյեկտները կազմում են սոցիալ-մշակութային միջավայրը, որը նաև դաստիարակչական հզոր ներուժ է ունի:

Ռուս մանկավարժներ Ա.Ս. Մակարենկոն, Վ.Ա. Սուխոմլինսկին նույնպես սոցիալ - հոգեբանական միջավայրը դիտարկել են որպես դաստիարակչական ներգործության առաջատար գործոն:

Ելնելով վերոբերյալից և մեր երկարամյա մանկավարժական աշխատանքի փրձից՝ կարծում ենք, որ իրականում դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորման վրա էականորեն ազդում է համանքի մշակութային բազան, որը ներառում է տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները, կոթող - ները, եկեղեցին, պատմական տեսարժան վայրերը, տեղանքի պատմությունը, էկոաշխարհագրական միջավայրը, ավանդույթներն ու սովորույթները:

---

[10] Տե՛ս, Բուրդիյե Պ., Վերարտադրությունը կրթության, հասարակության և մշակույթի ոլորտներում, Ե.: 1977, էջ 71-72:

Կրթական հաստատության և՛ մանկավարժական, և՛ աշակերտական կոլեկտիվները էականորեն կրում են ինչպես դրանց հոգևոր-բարոյական, այնպես էլ գեղագիտական, էկոլոգիական, արժեբանական, մարդաբանական ազդեցությունը: Դրանք են անձի սոցիալական զարգացման կարևոր մեխանիզմները:

Ընդհանուր առմամբ, այս ամենը նպաստում է՝

- հանրակրթական դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորմանը,
- մանկավարժական կոլեկտիվի,
- աշակերտության սոցիալ-մշակութային մտածողության,
- հոգևոր-բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, քաղաքացիական արժեհամակարգի և դիքորոշումների ձևավորմանը:

Եվ պայմանավորված սոցիալական պատկերացումներով, կենցաղով, պատմամշակութային արժեքների, ավանդույթների, սովորույթների նկատմամբ ունեցած վերաբերմունքով ձևավորվում են տվյալ միջավայրում ապրող երեխաների հոգեկերտվածքն ու հոգևոր աժեքները:

Հանրակրթական դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորման հիմնական առանձնահատկությունը համարում ենք դպրոցը, որը ոչ միայն իրականացնում է իր կրթադաստիարակչական գործառույթը, այլև մշակութալուսավորչական աշխատանք է տանում բնակչության շրջանում՝ դառնալով համայնքի սոցիալական ակտիվ կառույց:

Երկրորդ առանձնահատկությունը այն է, որ, եթե համայնքը (սոցիումը) իր սոցիալ-մշակութային կառույցներով ազդում է դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորման վրա՝ իր բոլոր ռեսուսներով նպաստելով կրթական հաստատության զարգացմանը, ապա դպրոցը իր ողջ կրթադաստիարակչական ներուժով և մանկավարժական հնարավորություններով ազդում է համայնքի սոցիալ - մշակութային միջավայրի զարգացման վրա՝ բավարարելով բնակիչների կրթական պահանջմունքները, բարեփոխելով նրանց սոցիալական կարգավիճակը:

Այսինքն՝ դպրոցը սոցիումի նկատմամբ իրականացնում է իր մշակութաստեղծ - ման գործառույթը՝ վերածելով նրան փոխներգործուն սոցիալ-մշակութային ակտիվ սուբյեկտի:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- համայնքի պատմաաշխարհագրական, սոցիալ-մշակութային միջավայրերը էական ներգործություն են ունենում համայնքի կրթական հաստատության սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորման,
- դպրոցականների դաստիարակության, և
- սոցիալականացման գործընթացի բովանդակության ու նրանց սոցիալապես նշանակալի որակների ձևավորման վրա:

Եզրակացություն

Տարրական դպրոցականների հասակակիցները այսօր դրված են զարգացման բոլորովին այլ պայմանների մեջ, քան նրանց հասակակիցները 20-30 տարի առաջ:

Հիմնական պատճառներն են՝ ինֆորմատիզացիան, վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, հասարակության անդամների արժեքային համա - կարգի փոփոխությունները, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը, սոցիալականացման տարաբնույթ գործոնների և սուբյեկտների մեծ թիվը և այլն: Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների ներառման գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ինչպես անհատական աշխատանքի միջոցով, այնպես էլ խմբային, ինչպիսին է օրինակ ծնողական ժողովների ժամանակ քննարկումները: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի ամենակիրառելի ձևերից մեկն է, որի միջոցով քննարկվում, ինչու ոչ, նաև լուծվում են դասարանում կատարված աշխատանքի ժամանակ առաջացած խնդիրները: Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար փոխօգնության խմբերի ձևավորումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ՝ ուսուցչի կողմից: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ առաջանում են անսպասելի իրավիճակներ, և անհրաժեշտ է մանկավարժի օգնությունը:

Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին աջակցություն ցույց տալը:

Այսպիսով՝ մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության երեխայի կրթական գործնթացը բարդանում է, իսկ խնդիրներն ու խոչընդոտները դառնում են անհաղթահարելի: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձի մի մասը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Հ. Սարգսյան., Մշակույթի տեսություն, Ե.: 2003
2. Բուրդիյե Պ., Վերարտադրությունը կրթության, հասարակության և մշակույթի ոլորտներում, Ե.: 1977
3. Галагузова М.А. и др., Социальная педагогика, М.: 2000
4. Караковский В.А., Воспитательная система школы: Педагогические идеи и опыт формирования. М.: 1991
5. Мудрик А.В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: 2004
6. Мертон Р.К., Социальная структура и аномия. Социология преступности, М., 1966
7. Пиаже Ж., Моральное суждение у ребенка, М.: 2006
8. Ушинский К.Д., О народности в общественном воспитании,Педагогические сочинения: в 6 т., т. 1, М.: 1990
9. Флейвелл Джон Х., Генетическая психология Жана Пиаже, М.: 1967
10. Фрейд З., Психология масс и анализ человеческого Я, М.: 1925